ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 29-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, որին ներկա էին ընկ. ընկ. Կ. Դեմիրճյանը, Հ. Ոսկանյանը, Ֆ. Սարգսյանը, Ռ. Արզումանյանը, Լ. Սահակյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Յու. Խաչամիրյանը:

Ժողովը ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը: Այնուհետև նա հանդես եկավ «ՀՍՍՀ ԳԱ խնդիրները ՍՄԿԿ XXVII համագումարի լույսի ներքո» զեկուցումով: Գիտատեխնիկական առաջադիմության արագացման պայմաններում, ասաց նա, մեծապես բարձրանում է գիտությունների ակադեմիայի՝ որպես հանրապետությունում կատարվող գիտահետազոտական աշխատանքների կոորդինատորի դերը, տեխնիկայի և տեխնոլոգիայի սկզբունքորեն նոր տեսակների տեսական հիմունքների ստեղծման համար նրա պատասխանատվությունը: Այս գործում ակադեմիայի հիմնարկները անչափ շատ անելիքներ ունեն: Առաջին հերթին դրանք նոր կադրերի դաստիարակության հարցերն են, գիտական կոլեկտիվների աշխատանքի կազմակերպման նոր ձևերին անցումը, գիտական պրոբլեմների լուծման գործում յուրաքանչյուր գիտաշխատողի ավանդի նյութական ու բարոյական գնահատման օբյեկտիվ չափանիշների մշակումը: Ինչպես ժողովրդական ողջ տնտեսության, այդ թվում նրա կարևորագույն արտադրողական ուժերից մեկի՝ գիտության զարգացման ըստ ամենայնի ինտենսիվացման պայմաններում անհրաժեշտ է ավելի արագորեն ներդնել նոր տեխնիկան, գիտական մեթոդները, մեծապես օգտագործել ավտոմատացման և հաշվողական տեխնիկայի միջոցները: Գիտական շատ ստորաբաժանումներում, ցավոք, բավարար ինտենսիվությամբ չի իրականացվում կողմնորոշումը դեպի ժամանակի առաջադրած նոր պահանջները: Անհրաժեշտ է վճռականորեն և արագորեն գիտական, նախագծային և կոնստրուկտորական աշխատանքներ ծավալել տեխնիկայի և տեխնոլոգիայի նոր տեսակների ստեղծման և յուրացման ուղղությամբ: Պետք է ուժեղացնել գիտական աշխատանքի կողմնորոշումը դեպի հանրապետության ժողովրդական տնտեսության կարիքներն ու շահերը: Այս կապակցությամբ զեկուցողը նշեց արտադրության պահանջների հետ առնչվող ֆունդամենտալ հանգուցային խնդիրների լուծման մասին պայմանագրերի կնքման ուղղությամբ ակադեմիայի հիմնարկների հետ մինիստրությունների ու գերատեսչությունների կոնտակտների պրակտիկայի անհրաժեշտությունը: Ռեպետ նախորդ տարվա համեմատությամբ նման պայմանագրերի ծավալները կրկնապատիկ մեծացել են, սակայն այդ տեմպերը գոհացուցիչ չեն:

Անդրադառնալով ֆունդամենտալ գիտության անցած տարվա նվաճումներին, Վ. Համբարձումյանը գոհունակությամբ նշեց դրանց հրատապությունը և որակական բարձր մակարդակը: Այդպիսիք են մասնավորապես ֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում մշակված զգայուն այն ապարատները, որոնք օգտագործվեցին «Վեներա—Հալլեյ» սովետական տիեզերական հայտնի գիտափորձի ժամանակ, այդ ծրագրով Բյուրականի աստղադիտարանի աշխատակիցների կատարած արդյունավետ դիտարկումները: Մեծ հաջողությունների է հասել ֆիզիկայի կիսառական պրոբլեմների ինստիտուտի կոլեկտիվը: Այստեղ ստացվել են ձայնի միջոցով ռենտգենյան ճառագայթների կառավարման և տարածության մեջ դրանց լիակատար փոխադրման հետ կապվող չափազանց կարևոր արդյունքներ: Լուծվել են նաև ռենտգենաակուստիկ և գամմաակուստիկ նոր երևույթների հետ կապված մի շարք այլ ոչ պակաս կարևոր խնդիրներ: Ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի մասնագետների մեջ մեծ հետաքրքրություն են առաջացրել ֆունդամենտալ մշակումների հիման վրա ստեղծված նոր սերնդի ինքնատիպ ֆիզիկական սարքերը:

ՍՄԿԿ XXVII համագումարում, այնուհետև շարունակեց Վ. Համբարձումյանը, Ն. Ի. Ռիժկովն իր զեկուցման մեջ մեր ժամանակների առավել հեռանկարային տեխնոլոգիաների թվում հիշատակեց նաև ինքնատարածվող բարձր ջերմաստիճանային սինթեզի տեխնոլոգիան: Ծանրակշիռ է հանրապետության քիմիկոսների և մասնավորապես ՀՍՍՀ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի կոլեկտիվի ավանդը: Սակայն այսօր խնդիրն այն է, որ գիտական նվաճումների ճանապարհը մինչև ժողովրդական տնտեսության պրակտիկայում լայն կիրառություն գտնելը ավելի ու ավելի կարճանա և արդյունավետ դառնա: Այս առումով էր, որ ՀԿԿ XXVIII համագումարում գիտությունների ակադեմիան արգարացիորեն քննադատվեց: Վերջում Վ. Համբարձումյանը հավաստիացրեց, որ հանրապետության գիտության աշխատողները իրենց շանքերը

կնպաստակամղեն այն վիթխարի խնդիրների կենսագործմանը, որոնք մշակել է ՍՄԿԿ XXVII համագումարը։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի 1985 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցեց հանրապետության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Գալոյանը։

Տարեկան ընդհանուր ժողովում զեկուցումների շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին Հայաստանի գիտությունների ակադեմիայի գիտական ստորաբաժանումների ներկայացուցիչներ, նշանավոր գիտնականներ։ Նրանք խոսեցին այն մասին, որ ժողովրդական տնտեսությունը իրավունք ունի գիտությունից ակընկալելու նոր, հեղափոխականացնող տեխնոլոգիաներ և դրանց իրականացման միջոցներ։ Այստեղից էլ թե՛ ակադեմիական և թե՛ ճյուղային գիտական բոլոր հիմնարկների համար գլխավոր հետևությունն այն է, որ պահանջվում է ավելի մեծ նախաձեռնություն ու ստեղծագործական ակտիվություն, բարձր պատասխանատվություն գիտության մակարդակի համար։

ՀՍՍՀ ԳԱ տարեկան ընդհանուր ժողովում տեղի ունեցավ հանրապետության գիտությունների ակադեմիայի պատվավոր պարգևների հանձնման ամենամյա հանդիսավոր արարողություն։

Գիտական անխոնջ, արդյունավետ և հանրօգուտ գործունեության համար «Մեծարման գիր» հանձնվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Հ. Վարդապետյանին։ Գիտահետազոտական արդյունավետ գործունեության համար մի մեծ խումբ գիտաշխատողների հանձնվեցին «Վաստակագրեր» և «Գովասանագրեր»։

Տեղի ունեցան Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտների և նախագահության անդամների ընտրություններ։ Փոխպրեզիդենտներ ընտրվեցին Վ. Ֆանարջյանը և Գ. Գալոյանը։

ՀՍՍՀ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 25-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի տարեկան ժողովը։ Բաժանմունքի 1985 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Բ. Առաքելյանը։ Նա ասաց, որ բաժանմունքի գիտական հիմնարկների գործունեությունը 1985 թ. ընթացել է ՍՄԿԿ հունիսյան (1983), ապրիլյան (1985) և մյուս պլենումների ու որոշումների, ինչպես նաև Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Մինիստրների խորհրդի որոշումների նշանաբանով։ Մեր երկրի կոմունիստները, ողջ աշխատավորությունը ջերմորեն պաշտպանում և լիակատար հավանություն են տալիս ՍՄԿԿ XXVII համագումարի որոշումներին, ՍՄԿԿ ծրագրի նոր խմբագրության հիմնադրույթներին։ Համագումարը ցույց տվեց, որ կուսակցությունը ընդունակ է առավելագույն չափով դասեր քաղելու անցյալից, լայնորեն լենինյան իմաստավորելու ընթացիկ ժամանակաշրջանը, մշակելու գործողությունների իրատեսական համակողմանիորեն կշռադատված ծրագիր։ ՍՄԿԿ առաջադրած խնդիրների իրականացման, գաղափարական աշխատանքների արդյունավետության, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արագացման, այդ հիման վրա սովետական ժողովրդի նյութական բարեկեցության և մշակույթի աճի, մեր երկրի պաշտպանության ամրապնդման գործում հիրավի կարևոր դեր են կատարում հասարակական գիտությունները։ Բաժանմունքի, նրա կազմի մեջ մտնող գիտական հիմնարկների ընթացիկ տարվա գործունեության փորձից ելնելով հարկ է նշել, որ բաժանմունքի ինստիտուտները առաջիկայում պետք է էլ ավելի լուրջ ուշադրություն դարձնեն գիտատեխնիկական ծրագրերի կատարման վրա, պարբերաբար քննարկեն և միջոցներ ձեռնարկեն երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու, գիտատեխնիկական առաջադիմության, գիտական հետազոտությունների արդյունավետության բարձրացման հարցերը գիտականորեն լուծելու համար։ Հասարակագետ գիտնականները ուսումնասիրում են ժողովրդատնտեսական և սոցիալական արդի պրոբլեմների լայն շրջան, գործոն մասնակցություն են ցուցաբերում ռեալ սոցիալիզմի օրինաչափությունների զարգացման տեսական դրույթների մշակմանը, միջազգային պրոցեսների ժամանակակից հրատապ հարցերին, իրենց ավանդն են ներդնում թշնամական գաղափարախոսության և քաղաքականության դեմ պայքարում, կուսակցության դաստիարակչական և պրոպագանդիստական աշխատանքներում։

Այնուհետև զեկուցողը հանգամանորեն խոսեց բաժանմունքի հիմնարկների՝ տնտեսագիտության, պատմության, արևելագիտության, հնագիտության և ազգագրության, սփյուռքահայ հա-

մայնքների պատմության և մշակույթի բաժնի, հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնի, բաժանմունքի բյուրոյի գործունեության մասին, նշեց ձեռք բերված նվաճումներ։ Գիտության մասսայականացման և գիտական քննադատության ուղղությամբ որոշակի աշխատանքներ են կատարում հասարակական գիտությունների գծով հրատարակվող ՀՍՍՀ ԳԱ պարբերականները՝ «Պատմա-բանասիրական հանդեսը» և «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագիրը, որոնք տարածվում են արտասահմանում և նպաստում սովետական գիտության ու գաղափարախոսության պրոպագանդային։

Բ. Առաքելյանը անդրադարձավ բաժանմունքի գիտական աշխատանքներում եղած թերություններին, հիմնարկների աշխատանքներին խանգարող մի շարք հանգամանքներին։ Մեր կուսակցությունը, կառավարությունը, վերջում ասաց զեկուցողը, հույժ բարձր է գնահատում հասարակական գիտությունների դերն ու նշանակությունը մեր երկրի հասարակական, քաղաքական և մշակութային կյանքում, մեր ժողովրդի հայրենասիրության և ինտերնացիոնալ դաստիարակության գործում, բուրժուական ամեն գույնի թշնամական գաղափարախոսության դեմ պայքարի բնագավառում։ Հասարակական գիտությունների զարգացմանը ընձեռվում են մեծ հնարավորություններ, միաժամանակ մեր կուսակցության և կառավարության կողմից առաջադրվում են լուրջ պահանջներ, և մենք պարտավոր ենք, ինչպես հարկն է, կատարել մեր պարտավորությունները։

Զեկուցման շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին պատմական գիտությունների թեկնածու Զ. Ղասարյանը, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ս. Երեմյանը, Մ. Ներսիսյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Մ. Քոչարյանը։ Նրանք հավանություն տվեցին հաշվետու զեկուցմանը, բաժանմունքի 1985 թ. գործունեությունը գնահատեցին բավարար և խոսեցին միջազգային գիտական կապերի, գործուղումների ընդլայնման, բուրժուական, մասնավորապես թուրքական գաղափարախոսության դեմ պայքարի ուժեղացման, գիտական քննադատության դերի, գիտական արտադրանքի որակի ըստ ամենայնի բարձրացման, ազատ ուժի օգտագործման և արտադնայության պրոցեսի, աշխատանքների լույն հրապարակայնության, աշխատանքի նկատմամբ բարձր պատասխանատվության և պահանջկոտության, ակադեմիայի աշխատակիցների կենսապայմանների բարելավման, ԳԱ համակարգում վարձատրության նոր համակարգի անցնելու և այլ հարցերի մասին։ Մտքերի փոխանակությունն ամփոփեց Բ. Առաքելյանը։

Ժողովում գիտական զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Խաչաբեկյանը և պատմական գիտությունների դոկտոր Կ. Խուդավերդյանը։ Վ. Խաչաբեկյանի զեկուցման թեման էր «Աշխատանքային ռեսուրսների օգտագործման և վերարտադրության ռեգիոնալ խնդիրները ՍՄԿԿ XXVII համագումարի որոշումների լույսի ներքո», իսկ Կ. Խուդավերդյանը՝ «Սովետական Հայաստանի պատմության արդի պրոբլեմների ուսումնասիրությունը ՍՄԿԿ XXVII համագումարի որոշումների լույսի ներքո»։

Պատմության և տնտեսագիտության բաժանմունքի տարեկան ժողովը լսեց նաև կազմակերպական հարցեր։ Բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար վերընտրվեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Առաքելյանը։

ՀՍՍՀ ԳԱ. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 25-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի տարեկան ժողովը։ Բաժանմունքի 1985 թ. գործունեության հիմնական արդյունքները և հետագա խնդիրները ՍՄԿԿ XXVII համագումարի որոշումների լույսի ներքո զեկուցումով հանդես եկավ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բրուտյանը։ Հաշվետու տարում, ասաց նա, բաժանմունքը և նրա հիմնարկները շարունակել են աշխատանքները ՍՄԿԿ XXVI, ՀԿԿ XXVII համագումարների, ՍՄԿԿ Կենտկոմի հունիսյան (1983 թ.) և հետագա պլենումների, և ՀԿԿ Կենտկոմի հուլիսյան (1983 թ.), հոկտեմբերյան (1985 թ.) պլենումների և համապատասխան որոշումների կատարման ուղղությամբ։ 1985 թ. բաժանմունքն անց է կացրել ընդհանուր ժողով, որտեղ քննարկվել է բաժանմունքի 1984 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին հաշվետվությունը։ Լսվել են գիտական զեկուցումներ հետևյալ թեմաներով՝ «Վահան Տերյանի ստեղծագործության գիտական ուսումնասիրության հարցերից», «Հեղվական հարցերի լուծման մեջ հաշվողական տեխնիկայի կիրառման մասին»։ Այնուհետև Գ. Բրուտյանը հանգամանորեն խոսեց բաժանմունքի բյուրոյի գործունեության, բաժանմունքի գիտահետազոտական գործունեության արդյունքների մասին։ Զեկուցողը նշեց, որ գիտահետազոտական աշխատանքներն ընթացել են հետևյալ պրոբլեմների ուղղությամբ՝ գիտական իմացության տեսության և տրամաբանության, կոմ-

նիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման, զարգացած սոցիալիզմի արտադրական հարաբերությունների և սոցիալիստական ապրելակերպի ամրապնդման տեսական պրոբլեմներ, սոցիալիստական արդարադատության և հանցագործության դեմ պայքարի կազմակերպման տեսական պրոբլեմներ, երկրի էկոնոմիկայի՝ որպես միասնական ժողովրդատնտեսական կոմպլեքսի իրավական կարգավորման կատարելագործման ուղիներ, սոցրայական հոգեբանության և անհատի ձևավորման հոգեբանական պրոբլեմներ, հասարակական մտքի պատմության պրոբլեմներ, համաշխարհային մշակույթի տեսական պրոբլեմներ, ՍՍՀՄ ժողովուրդների մշակույթների պատմության և նրա տեղը համաշխարհային մշակույթում, ՍՍՀՄ ժողովուրդների արվեստի պատմության, գիտատեխնիկական հեղափոխության սոցիալական պրոբլեմներ, մարքս-լենինյան գեղագիտության կարևորագույն կատեգորիաներ և արվեստի ընդհանուր տեսական խնդիրներ, գեղագիտական մտքի զարգացում, սովետական բազմազգ գրականության պատմության, եղբայրական սոցիալիստական երկրների գրականությունների զարգացման օրինաչափություններ, ՍՍՀՄ ժողովուրդների գրականության նախահոկտեմբերյան շրջանի պատմության, խոսքի մշակույթի հարցեր, լեզվի պատմության, լեզվաբանության փիլիսոփայության պրոբլեմներ, հանրալեզվաբանության, պատմահամեմատական լեզվաբանության, նկարագրական լեզվաբանության, լեզվաբանական տիպաբանության, տարածքային ուսումնասիրություններ, տերմինաբանության և այլն։ 1985 թ., ասաց Գ. Բրուտյանը, բաժանմունքի ինստիտուտների մակնիշով լույս է տեսել 34 անուն գիրք, իսկ տպագրության է հանձնվել 30 աշխատություն։ Բաժանմունքի ինստիտուտները կազմակերպել են մի շարք գիտատեսական և գիտագործնական կոնֆերանսներ ու սեմինարներ։ ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը կազմակերպել և անցկացրել է նաև հոբելյանական 4 նստաշրջան, իսկ ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը՝ հայ արվեստին նվիրված 4-րդ միջազգային գիտաժողովը։ Բաժանմունքի ինստիտուտների աշխատակիցները հանրապետության աշխատավորության շրջանում հանդես են եկել մոտ 800 դասախոսությամբ։

Այնուհետև Գ. Բրուտյանը անդրադարձավ բաժանմունքին առընթեր կոորդինացիոն, Դավիթ Անհաղթի տեսական ժառանգության և միջնադարյան Հայաստանի փիլիսոփայության, բարոյագիտության պրոբլեմների, բնագիտության և տեխնիկայի պատմության դիտական խորհուրդների, ՍՍՀՄ փիլիսոփայության ընկերության և Սովետական սոցիոլոգիական ասոցիացիայի հայկական բաժանմունքների, միջազգային գիտական համագործակցության շրջանակներում բաժանմունքի ինստիտուտների գործունեությանը, բաժանմունքի գիտական հիմնարկների ցանցում կատարված փոփոխություններին, ինստիտուտների աշխատակիցներին տրված պարգևատրումներին։

Զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն, որին մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Է. Ազայանը, Գ. Ղարիբջանյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամներ Գ. Խանջյանը, Ս. Առնշատյանը։ Նրանք հավանություն տվեցին հաշվետու զեկուցմանը, բաժանմունքի 1985 թ. գործունեությունը գնահատեցին բավարար և խոսեցին աշխատանքային կարգապահության բարձրացման, բաժանմունքի գիտական հիմնարկների, ՀՍՍՀ ԳԱ տպարանների նյութատեխնիկական բազայի, հրատարակված աշխատությունների, մասնավորապես արվեստին նվիրված գրքերի պոլիգրաֆիական ցածր մակարդակի և այլ հարցերի մասին։ Մտքերի փոխանակությունն ամփոփեց Գ. Բրուտյանը։

Ժողովում զեկուցումներով հանդես եկան բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Սեմերը և ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ջահուկյանը։ Նրանցից առաջինը խոսեց «Ժամանակակից ուիյուքահայ գրականության գաղափարական-գեղարվեստական զարգացման հիմնական միտումները» թեմայով, իսկ երկրորդը՝ հայոց լեզվի՝ ստուգաբանական բառարանի կազմման սկզբունքների մասին։

Փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի տարեկան ժողովը լսեց նաև կազմակերպական հարցեր։ Բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար վերընտրվեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բրուտյանը։